ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/75

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր տրված՝ 24.10.2019թ.)

«Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի լիազորված ներկայացուցիչներ՝

Ա. Թամազյանի (լիազորագիր տրված՝ 24.10.2019թ.)

Կ.Ղևոնդյանի (լիազորագիր տրված՝ 24.10.2019թ.)

Դ. Մելիքսեթյանի (լիազորագիր տրված՝ 24.10.2019թ.)

քննելով «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից առողջության ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից 23.10.2019թ. ներկայացված և 23.10.2019թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/75 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 23.10.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը՝

«Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար «Առողջության ապահովագրության ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.

առնվազն 10 բժիշկ (որակավորումը՝ հետբուհական նեղ բժշկական մասնագիտական (օրդինատուրա) կրթության մասին փաստաթուղթ /վկայական/, ապահովագրական ընկերությունում աշխատանքային փորձը՝ առնվազն 1 տարի, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ բժիշկ-փորձագետ)

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների			
անունը,	Որակավորումը	աշխատանքային փորձը	գործատուի

ազգանունը		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	անվանումը
1	2	3	4	5

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն և որպես նավազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի գնային առաջարկը կազմել է 58 360 400 ՀՀ դրամ, մինչդեռ հաջորդ տեղը զբաղեցնող մասնակցի գնային առաջարկը արդեն կազմել է 72 245 600 ՀՀ դրամ, այսինքն գնային առաջարկների տարբերությունը կազմում է մոտ 14 մլն /13,885,200/ ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 26.08.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու նպատակով ծանուցել վերջինիս՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովին ներկայացնել՝ հրավերի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասնակցի համապատասխանության հիմնավորման նպատակով ցանկով ներկայացված թվով 10 բժիշկների ապահովագրական ընկերությունում առնվազն 1 տարվա աշխատանքային փորձը հիմնավորող փաստաթղթեր՝ քաղվածք աշխատանքային պայմանագրերից կամ հրամանների պատճենները, ինչպես նաև ներկայացնել հրավերին կից պայմանագրերի նախագծի տեխնիկական բնութագրի 8-րդ կետով սահմանված ՀՀ բոլոր մարզերում մասնաճյուղերի կամ գործակալների ցանկը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը արձանագրել է՝ հրավերի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասնակցի համապատասխանության հիմնավորման նպատակով ներկայացված շտկման փաստաթղթերը, քաղվածքները, առնվազն երեք աշխատակիցների մասով, որոնց հետ պայմանագրերը կնքվել են միևնույն օրը, այն է ս.թ. օգոստոսի 22, կրկին բավարար չեն հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելու համար:

Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը, առաջնորդվելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 67-րդ կետով, որոշում կայացրեց ներկայացված փաստաթղթերի իսկությունը ստուգելու համար հարցում իրականացնել ՀՀ ՊԵԿ:

Գնահատող հանձնաժողովի 11.10.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, որոշեց «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընկերությունը վկայակոչել է բողոքի հետևյալ իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...:

Ընթացակարգի հրավերի 2.5 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները.

առնվազն 10 բժիշկ (որակավորումը՝ հետբուհական նեղ բժշկական մասնագիտական (օրդինատուրա) կրթության մասին փաստաթուղթ /վկայական/, ապահովագրական ընկերությունում աշխատանքային փորձը՝ առնվազն 1 տարի, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը՝ բժիշկ-փորձագետ)

բ. մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին.

գ. եթե մասնակիցը ճանաչվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, ապա վերջինս սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին է ներկայացնում առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Առաջադրվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները ներկայացվում են հետևյալ ձևով՝

Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների				
անունը, ազգանունը	Որակավորումը	աշխատանքային փորձը		գործատուի անվանումը
		ժամանակահատվածը	գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը	
1	2	3	4	5

Ընկերությունը գտնում է, որ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը, մերժելով «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի հայտը, ընթացակարգի տարբեր փուլերում խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները՝ հետևյալ հիմնավորմամբ.

ա) «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ծանուցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով Հրավերով պահանջված առաջադրված աշխատակազմում ներգրավված մաս-նագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմների պատճենները: Ընկերության կողմից ներկայացվել է նաև պահանջված 5.1 հավելվածը՝ տեղեկանք հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների վերաբերյալ, որի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բոլոր առաջադրված 10 մասնագետները ունեն

Ընթացակարգի հրավերով պահանջված առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձը ապահովագրական ընկերությունում:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը, չարձանագրելով որևէ անհամապատասխանություն ներկայացված որակավորման փաստաթղթերում, 03.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու նպատակով ծանուցել վերջինիս՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովին ներկայացնել հրավերի «Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը» բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասնակցի համապատասխանության հիմնավորման նպատակով ցանկով ներկայացված թվով 10 բժիշկների ապահովագրական ընկերությունում առնվազն 1 տարվա աշխատանքային փորձը հիմնավորող փաստաթղթեր՝ քաղվածք աշխատանքային պայմանագրերից կամ հրամանների պատճենները, ինչպես նաև ներկայացնել հրավերին կից պայմանագրերի նախագծի տեխնիկական բնութագրի 8-րդ կետով սահմանված ՀՀ բոլոր մարզերում մասնաճյուղերի կամ գործակալների ցանկը:

Ընկերությունը խնդրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա. վերոհիշյալ արձանագրությամբ կայացրած որոշման ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ նշված որոշումը՝ լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու վերաբերյալ, հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Մասնավորապես, «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացվել է հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող բոլոր փաստաթղթերը:

Այնուհետև, գնահատող հանձնաժողովը, փաստորեն ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի պահանջներով, պահանջել է մասնակցից մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովին ներկայացնել Հրավերի բաժնի 2.5 կետի 4-րդ ենթակետով «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասնակցի համապատասխանության հիմնավորման նպատակով ցանկով ներկայացված թվով 10

բժիշկների ապահովագրական ընկերությունում առնվազն 1 տարվա աշխատանքային փորձը հիմնավորող փաստաթղթեր՝ քաղվածք աշխատանքային պայմանագրերից կամ հրամանների պատճենները:

Ընկերությունը նշել է, որ մինչդեռ Ընթացակարգի Հրավերով թվով 10 բժիշկների ապահովագրական ընկերությունում առնվազն 1 տարվա աշխատանքային փորձը հիմնավորող փաստաթղթեր՝ քաղվածք աշխատանքային պայմանագրերից կամ հրամանների պատճենները, ներկայացնելու պահանջ ընդհանրապես նախատեսված չի եղել: Գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությունից պահանջվել են լրացուցիչ այնպիսի փաստաթղթեր, որոնք նախատեսված չեն եղել Ընթացակարգի հրավերով և որը պահանջելու իրավունք գնահատող հանձնաժողովին գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ վերապահված չէ:

Ընկերությունը նշել է, որ բացի այդ, Կարգի 47-րդ կետը հնարվորություն է տալիս գնահատող հանձնաժողովին մասնակցից մեկ /ներկա օրենսդրական կարգավորմամբ՝ երեք/ աշխատանքային օրվա ընթացքում պահանջել մասնակցից շտկում կատարել /ներկայացնել լրացուցիչ փաստաթղթեր/ ներկայացված փաստաթղթերում, եթե որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի գնահատման ընթացքում արձանագրվում է անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ: Իսկ ինչպես արդեն նշվել է, գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերում ոչ թե արձանագրվել են անհամապատասխանություններ, այլ ընդամենը ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու նպատակով գնահատող հանձնաժողովը ծանուցել է մասնակցին՝ ներկայացնելու լրացուցիչ փաստաթղթեր, որոնք ըստ Հրավերի, մասնակիցը պարտավոր չէր ներկայացնելու, սակայն հասկանալով, որ այդ լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու ծանուցմանը չպատասխանելու արդյունքում՝ գնահատող հանձնաժողովը կմերժի Ընկերության հայտը, փաստաթղթեր չներկայացնելու հիմքով, որոշում է կայացրել ներկայացնել նաև պահանջվող լրացուցիչ փաստաթղթերը:

բ) Գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված 10 բժիշկների աշխատանքային պայմանագրերից քաղվածքները, հանձնաժողովի 16.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշել է. ուսումնասիրելով քաղվածքները, գտնում ենք, որ առնվազն երեք աշխատակիցների մասով՝ Հարությունյան Տաթևիկ, Առուշանյան Նարինե, Բեգլարյան Մարիամ, որոնց հետ

պայմանագրերը կնքվել են միևնույն օրը, այն է ս.թ. օգոստոսի 22, կրկին բավարար չեն հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելու համար: Ղեկավարվելով Կարգի 67-դ կետի պահանջներով՝ որոշում կայացվեց ներկայացված փաստաթղթերի՝ քաղվածքների, իսկությունը ստուգելու համար հարցում իրականացնել ՀՀ ՊԵԿ:

Ընկերությունը հայտնել է, որ այս կապակցությամբ բողոքներ քննող անձի ուշադրությունն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ վերոհիշյալ դեպքում առկա չի եղել Կարգի 67-դ կետով սամանված հիմքը: Մասնավորապես, գնահատող հանձնաժողովի կողմից մատնանշված անձանց մասով ներկայացվել են հետևյալ բովադակությամբ քաղվածքներ.

Հարությունյան Տաթևիկ - պայմանագրի համարը՝ 500, հրաման՝ 484-Ա, ժամանակահատվածը՝ 03.07.2017թ.-03.12.2018թ., պայմանագրի համարը՝ 623, հրաման՝ 331-Ա, ժամանակահատվածը՝ 22.08.2019թ. սկսած՝ անորոշ:

Առուշանյան Նարինե - պայմանագրի համարը՝ 383, հրաման՝ 344-Ա, ժամանակահատվածը՝ 03.11.2014թ.-03.07.2017թ., պայմանագրի համարը՝ 622, հրաման՝ 330-Ա, ժամանակահատվածը՝ 22.08.2019թ. սկսած՝ անորոշ:

Բեգլարյան Մարիամ - պայմանագրի համարը՝ 462, հրաման՝ 292-Ա, ժամանակահատվածը՝ 15.09.2016թ-03.12.2018թ., պայմանագրի համարը՝ 624, հրաման՝ 332-Ա, ժամանակահատվածը՝ 22.08.2019թ. սկսած՝ անորոշ:

Վերոհիշյալ քաղվածքների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ վերհիշյալ երեք անձինք համապատասխանում էին Հրավերի պահանջներին, քանի որ բոլոր երեքն էլ ունեին ավելի, քան մեկ տարվա աշխատանքային փորձ ապահովագրական ընկերություններում: Եվ նման պայմաններում ավելի, քան անհասկանալի է և ոչ իրավաչափ գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրությամբ կայացրած այն որոշումը, որ լրացուցիչ ներկայացված և հրավերով չնախատեսված փաստաթղթերը կրկին բավարար չեն հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելու համար: Եվ ավելի, քան ոչ իրավաչ է Կարգի 67-րդ կետի պահանջների կիրառումը և ներկայացված փաստաթղթերի՝ քաղվածքների, իսկությունը ստուգելու համար հարցում ՀՀ ՊԵԿ իրականացնելը:

գ) Այնուհետև գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, որոշում է կայացրել՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասնակցի համապատասխանության հիմնավորման նպատակով ներկայացված շտկման փաստաթղթերը, քաղվածքները, առնվազն երեք աշխատակիցների

մասով, որոնց հետ պայմանագրերը կնքվել են միևնույն օրը, այն է ս.թ. օգոստոսի 22, կրկին բավարար չեն հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելու համար և ընկերության հայտը մերժել:

Ընկերությունը հայտնել է, որ առնվազն մտահոգության տեղիք է տալիս այն հանգամանքը, որ նույնիսկ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկատվությամբ է փաստվել, որ երեք աշխատակիցները հանդիսանում են «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի աշխատակիցներ և արդյունքում «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է ոչ թե Օրենքի, Կարգի կամ Հրավերի որևէ կետին չհամապատասխանելու հիմքով, այլ ընդամենը այն հիմքով, որ առկա փաստաթղթերը բավարար չեն հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելու համար: Այս դեպքում հարց է առաջանում, թե ինչի համար էր պետք այդ լրացուցիչ փաստաթղթերը և ՀՀ ՊԵԿ-ին կատարված հարցումը և այդ հարցմանը տրված պատասխանը, երբ գնահատող հանձնաժողովը պետք էր մերժեր Ընկերության հայտը՝ հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելու համար բավարար հիմքեր չլինելու հիմքով:

Բացի այդ, ՀՀ ՊԵԿ-ի կողմից վերոհիշյալ երեք անձանց մասով տեղեկատվությունը ներկայացվել է միայն վերջին ժամանակահատվածի համար, այն է՝ սկսած 2019թ. օգոստոսի 22-ից:

Մինչդեռ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքներից /կցվում է/ պարզ է դառնում, որ վերոհիշյալ երեք աշխատակիցների ստաժը գերազանցում է Ընթացակարգի հրավերով պահանջված առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժը ապահովագրական ընկերությունում, մասնավորապես.

Հարությունյան Տաթևիկ - 03.07.2017թ.-03.12.2018թ.՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ում,

Առուշանյան Նարինե - 03.11.2014թ.-03.07.2017թ.՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ում,

Բեգլարյան Մարիամ - 15.09.2016թ.-03.12.2018թ.՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ում:

Ընկերությունը տեղեկացրել է, որ ի հավաստումն վերոհիշյալ տեղեկատվության՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն 16.19.2019թ. էլեկտրոնային եղանակով հարցում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ նախագահ Դ. Անանյանին, խնդրելով հաստատել, որ նշված անձինք նշված ժամանակահատվածում աշխատել են Ընկերությունում.

Հարությունյան Տաթևիկ - 03.07.2017թ.-03.12.2018թ.,

Առուշանյան Նարինե - 03.11.2014թ.-03.07.2017թ.,

Բեգլարյան Մարիամ - 15.09.2016թ.-03.12.2018թ.:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ նախ, գնահատող հանձնաժողովը ոչ իրավաչափ պահանջել է «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ից ներկայացնել հնարավոր չնախատեսված փաստաթղթեր, այնուհետև անհիմն կիրառել Կարգի 67-րդ կետով նախատեսված իրավակարգավորումը, մինչդեռ ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված քաղվածքների՝ պարզ է դառնում, որ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով լիովին համապատասխանել է Հրավերի պահանջներին և Ընկերությունը ունի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսներ:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարված ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 11.10.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրությամբ՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:
2. Պարտավորեցնել «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարված ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին բավարարող:
3. Պարտավորեցնել «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար հայտարարված ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին ճանաչել ընտրված/հաղթող մասնակից:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.10.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 23.10.2019թ. գրությամբ դիմել է «Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամին՝ սույն բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը տրամադրելու վերաբերյալ:

«Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը 28.10.2019թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքի մի շարք դրույթներ ուղղակի չեն բխում գնումների գործընթացը կարգավորող գործող օրենսդրության պահանջներից, մասնավորապես.

ա/ 8-րդ էջում բերված այն փաստարկը, որ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 03.09.2019թ. նիստին կայացված որոշմամբ /Արձանագրություն N 3/ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին մասնակցի ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելու նպատակով վերջինիս լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու պահանջը հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին, հիմնավոր չէ: Այսպես, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ» -ի (հետայսու նաև՝ Կարգ) 66-րդ կետն ուղղակիորեն սահմանում է, որ «Մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր»: Դա նշանակում է, որ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորելու նպատակով մասնակիցը, իրեն ներկայացված պահանջի առկայության դեպքում, կարող է ներկայացնել մրցույթի հրավերով չնախատեսված լրացուցիչ փաստաթղթեր: Մասնակցից լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու անհրաժեշտությունը գնահատող հանձնաժողովի մոտ ծագել է այն պարզ պատճառով, որ մասնակցի կողմից հրավերով նախատեսված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին իր համապատասխանությունը հիմնավորելու

նպատակով ներկայացված փաստաթղթերից պարզվել է, որ թվով 10 բժիշկներից երեքի հետ աշխատանքային պայմանագրերը կնքվել են միևնույն օրը, այն է՝ 22.08.2019թ., այսինքն մրցույթի հրավերի հրապարակումից մինչև բացման նիստի օրն ընկած ժամանակահատվածում, ինչը բնականաբար կարող էր գնահատող հանձնաժողովի անդամների մոտ հիմնավոր կասկած առաջացնել ապահովագրական ընկերությունում նշված աշխատակիցների որպես բժիշկ – փորձագետ առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձառություն ունենալու վերաբերյալ: Այսպիսով Պատվիրատուն գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու վերաբերյալ պահանջը եղել է իրավաչափ և բխել է գործող օրենսդրության պահանջներից:

բ/ մասնակիցը բողոքում բերված իր հիմնավորումների «բ» կետում վկայակոչելով այն հանգամանքը, որ գնահատող հանձնաժողովի 16.09.2019թ. կայացած նիստի որոշմամբ /Արձանագրություն N 5/ հանձնաժողովը թվով երեք աշխատակիցների մասով ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը կրկին բավարար չի համարել հրավերի պահանջներին դրանց համապատասխանությունը հիմնավորելու և վերջնական որոշում կայացնելու համար և, ըստ այդմ, որոշել է մասնակցի «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշին համապատասխանության հիմնավորման նպատակով կատարել հարցում ՀՀ ՊԵԿ, գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը համարել է ոչ իրավաչափ, գտնելով, որ առկա չի եղել Կարգի 67-րդ կետով սահմանված հիմքը, քանի որ վերջինիս հավաստմամբ իր կողմից ներկայացված փաստաթղթերը, այն է՝ աշխատանքային պայմանագրերից քաղվածքներն ամբողջությամբ հաստատում են երեք աշխատակիցների ընկերությունում առնվազն մեկ տարվա աշխատանքային փորձառություն ունենալու հանգամանքը: Նշվածի առնչությամբ ցանկանում ենք բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ Կարգի 67-րդ կետը չի նախատեսում որևէ անհրաժեշտ հիմք կամ պայման մասնակցի կողմից ներկայացրած տվյալների իսկությունը ստուգելու նպատակով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը ստանալու նպատակով գնահատող հանձնաժողովի կողմից հարցում կատարելու համար: Պատվիրատուն գտնում է, որ նման հարցում կատարելու համար միանգամայն բավարար է մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի հավաստիության վերաբերյալ գնահատող հանձնաժողովի մոտ ձևավորված հիմնավոր կասկածը: Նշվածի առնչությամբ Պատվիրատուն գտնում է, որ մասնակիցը փորձում է ներկայացնել իրավական ակտերի նորմերի վերաբերյալ սեփական

մեկնաբանությունները և, հիմնվելով դրանց վրա, կատարում է ոչ ճիշտ եզրահանգում գնահատող հանձնաժողովի գործողությունների ոչ իրավաչափ լինելու մասին:

գ/ բողոքում բերված հիմնավորումների «գ» կետում մասնակիցը, վկայակոչելով գնահատող հանձնաժողովի կողմից 11.10.2019թ. կայացած նիստում /Արձանագրություն N 6/ ընկերության հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը, ամբողջությամբ խեղաթյուրել է որոշման բովանդակությունը, ընդ որում բերելով նաև իրարամերժ պնդումներ: Այսպես, առաջին պարբերության մեջ նշելով, որ «Այնուհետև գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, որոշում է կայացրել .... ընկերության հայտը մերժել», նույն պարբերության և հաջորդ պարբերության մեջ պնդում է, որ հանձնաժողովը մասնակցի հայտը մերժել է «ոչ թե Օրենքի, Կարգի կամ Հրավերի որևէ կետին չհամապատասխանելու հիմքով, այլ ընդամենը այն հիմքով, որ առկա փաստաթղթերը բավարար չեն հանձնաժողովի կողմից վերջնական որոշում կայացնելու համար»: Պատվիրատուն Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ գնահատող հանձնաժողովի կողմից 11.10.2019թ. կայացած նիստում /Արձանագրություն N 6/ ընդունված որոշման տեքստում նման արտահայտություն ընդհանրապես գոյություն չունի, այլ փոխարենը որոշումը կայացնելիս գնահատող հանձնաժողովը բացառապես հիմնվել է ՀՀ ՊԵԿ կողմից 04.10.2019թ. ներկայացված տեղեկատվության հիման վրա, որից պարզ է դառնում, որ մասնակցի նշված երեք աշխատակիցներն էլ ընկերությունում աշխատանքի են անցել 2019թ. օգոստոսի 22-ից /այսինքն մրցույթի հրավերի հրապարակումից հետո/:

դ/ մասնակիցը բողոքի 11-րդ էջում նշում է, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրված ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքներից /կցվում է/ պարզ է դառնում, որ վերոհիշյալ երեք աշխատակիցների ստաժը գերազանցում է Ընթացակարգի հրավերով պահանջված առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժը ապահովագրական ընկերությունում..., և առնվազն զարմանալի է, որ անմիջապես հաջորդ պարբերությամբ տեղեկացնում է բողոքներ քննող անձին «որ ի հավաստումն վերոհիշյալ տեղեկատվության՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն 16.19.2019թ. հարցում է ներկայացրել /կցվում է/ ՀՀ ՊԵԿ նախագահ Դ. Անանյանին, խնդրելով հաստատել, որ նշված անձինք նշված ժամանակահատվածում աշխատել են Ընկերությունում»: Առնվազն մտահոգության տեղիք են տալիս հետևյալ երեք հանգամանքները.

Մասնակիցը փորձում է ՀՀ ՊԵԿ կողմից տրված մի տեղեկատվությունը հիմնավորել նույն ՀՀ ՊԵԿ կողմից տրվելիք մեկ այլ տեղեկատվությամբ:

Եթե բողոքում նշված ՀՀ ՊԵԿ կատարված հարցման ամսաթիվը 16.09.2019 թվականն է /բողոքում նշված է 16.19.2019թ./, ապա անհասկանալի է, թե մասնակիցը ինչպես կարող է հարցում կատարել ՀՀ ՊԵԿ այն նույն օրը, երբ գնահատող հանձնաժողովի կողմից է ներկայացվել առաջին հարցումը ՀՀ ՊԵԿ՝ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը ճշտելու նպատակով,

Չնայած որ հավաստվում է, որ բողոքին կցված է ինչպես ՀՀ ՊԵԿ կողմից տրամադրված ֆիզիկական անձի անհատական հաշվի քաղվածքները, այնպես էլ ՀՀ ՊԵԿ կատարված հարցումը, սակայն ոչ մեկը, ոչ էլ մյուսը բողոքին կից հրապարակված չեն:

Հաշվի առնելով վերոնշյալ բոլոր փաստերն ու հանգամանքները գնահատող հանձնաժողովը գտնում է, որ.

ա/ մասնակցի կողմից բողոքում գնահատող հանձնաժողովի գործողությունների ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ բոլոր պնդումները հիմնազուրկ են և չեն բխում գործող իրավակարգավորումների պահանջներից,

բ/ գնահատող հանձնաժողովի բոլոր գործողությունները գնման ընթացակարգի ամբողջ ժամանակահատվածում հիմնվել են բացառապես Օրենքի և Կարգի դրույթների ու պահանջների վրա,

գ/ գնահատող հանձնաժողովը մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ որոշում կայացնելիս բացառապես հիմնվել է ՀՀ ՊԵԿ կողմից տրված պաշտոնական տեղեկատվության վրա»:

Պատվիրատուն հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կարիքների համար առողջության ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2 ծածկագրով բաց մրցույթի մասնակից «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ մերժել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 28.10.2019թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ԳԲՔԱ-ՆԳ-2019/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2019/75 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ:

2. «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթով նախատեսվել է ձեռք բերել «Առողջության ապահովագրության ծառայություններ», որը ներառված է գնումների միասնական անվանացանկի 66511120 միջանցիկ ծածկագրում:

4. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի 23.10.2019թ. բողոքը, «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, Պատվիրատուի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ **<u>գնումների պլանավորումը</u>**, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **գնումների պլանը**, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում **պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում**, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով սահմանվում է, որ տեղեկագիրը սույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսպես՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարվել է «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթ:

«ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի գնման առարկան հանդիսանում է «Առողջության ապահովագրության ծառայություններ»-ը, որը ներառված է գնումների միասնական անվանացանկի 66511120 միջանցիկ ծածկագրում:

Այսպիսով, Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **<u>գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում</u>**, որը օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում, մինչդեռ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից իրականացված ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ սույն որոշումը հրապարակելու օրվա դրությամբ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի գնման առարկա հանդիսացող «Առողջության ապահովագրության ծառայություններ»-ը, որը ներառված է գնումների միասնական անվանացանկի 66511120 միջանցիկ ծածկագրում, ներառված չէ «Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ» հիմնադրամի կողմից 27.02.2019թ. www.procurement.am (www.gnumner.am) հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլանում:

Այսպիսով՝ գտնում եմ, որ նման պայմաններում «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթը պետք է հայտարարել չկայացած, քանի որ այն կազմակերպվել է առանց իրավական հիմքի:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից 27.02.2019թ. հրապարակված գնումների պլանում ներառված է «Բժշկական ապահովագրություն ծառայություններ»-ը, որը սակայն ներառված է գնումների միասնական անվանացանկի այլ՝ 66511140 միջանցիկ ծածկագրում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթը չկայացած է հայտարարվում, ուստի «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքը ըստ էության չի կարող քննվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ-ի կողմից կողմից 23.10.2019թ. ներկայացված բողոքը մերժել:
2. Պարտավորեցնել «ՀՊՄՀ-ԲՄԾՁԲ-19/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին Ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**